

Ճ ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԱՆԴԻԱՆՅԱԸ ՀՆԴԿԱՍՏԱՆ-  
ՆՈՒՄ<sup>1)</sup>

«Ժողովուրդացէ ի գլուխ գլխոցն  
գլխիւ չափ արհամարհանս ա-  
պագայից»:

Նամակ Նալբանդեանցի

27 Յուլիսի 1861

8 Օգոստոսի Կալկաթա

Գլուխ Ա.

Մեր ընթերցող Հասարակութեան այն մասին, որ  
Հետաքրքրուում է մեր նորագոյն պատմութեամբ, լա-  
յալտնի են Ղրիմի Հայերի վերջին մեծ գաղթականու-  
թեան և Նոր-Նախիջևանի հիմնարկութեան հանգա-  
մանքները: Այդ նիւթին վերաբերեալ, չիշեցով հին աղ-  
բիւրները, հէնց այս վերջին երեք տարուալ ընթաց-  
քում մեր գրականութեան մէջ լոյս տեսան երեք բա-  
ւականին առուար աշխատանք—պ. Լէօյի «Յովսէփ կա-

<sup>1)</sup> Մեր այս յօդուածի նիւթը մենք բաղել ենք Նալբան-  
դեանցի այն թղթերից, որոնք ամենածախ ժամանակի և ան-  
նպաստ հանգամանքների ճիրաններից ազատուելով, պահպա-  
նուել են հանգուցեալի եղբորորդիների ձեռքին—Պ. Պ. Ղալա-  
րոսի և Յարութիւնի, իբրեւ նորա ժառանգների: Օգտուում ենք  
դէպքից մեր շնորհակալութիւնը յայտնելու նոցա, որ նոքա  
թղթի տուին մեզ աչքի անցկացնելու այդ թղթերը:

Այդ թղթերի թիւը շատ մեծ է, բայց դժբաղտաբար դո-  
քա բաղկացած են հատ ու կտոր և, ըստ մեծի մասին, անպէտք  
բաներից: Ամենակարևորը դոցա մէջ պէտք է անկասկած հա-  
մարել այն մի բանի նամակաձև պաշտօնական թղթերը, որ

թուղիկոս Արղութեան»-ը և մեր «Պատմական պատկերներ»-ը ու «Նոր-Նախիջևանը և Նոր Նախիջևանցիք»-ը, որոնցից առաջինը նուիրուած է Արղութեանի գործունէութեան մասամբ և Նախիջևանցոյ գաղթականութեան, իսկ երկրորդը և երրորդը—ամբողջապէս գաղթականութեան և Նոր-Նախիջևանի հիմնարկութեան:

Յայտնի է, որ Նախիջևանի հիմնադիր Յովսէփ արքեպիսկոպոսը գաղթականների աղքատութիւնից առաջ եկած թշուառութիւնների առաջն առնելու համար, դիմեց զանազան միջոցների. նա, ի միջի ալլոց, նամակներ գրեց Հնդկաստանի հարուտ Հայերին, խնդրելով նրաթական ձեռնտուութիւն, որպէս զի հնարաւոր լինի, գոնէ, առաջին նուագ ամուսնել գաղթականների խեղճութիւնը, մինչև որ նոքա կարողանան ոտքի կանգնել և

հանգուցեալը գրել է զրարառ լեղումով իրրն զեկուցումն հընդակական հրիտակների գործի մասին իւր ծանապարհորդութեան միջոցին և Վալկաթայից քաղաքազուէն Հայրապետեանցին, որոնցից և մենք իսկապէս օգտուել ենք մեր յօդուածի համար:

Վարեոր են մասամբ և անգլիերէն լեզուով գրուած հրիտակներին վերաբերեալ հաշիւները, երկու բողոքագրի անդլիական բնագրերը, հանգուցեալի ծննդականը, Լազարեան ճեմարանում Հայոց լեզուի ուսուցիչ լինելու համար Պետերբուրգի համալսարանից ստացած վկայականը, Թագէոս արքեպիսկոպոսի մասին կաթուղիկոսին գրած ընդարձակ նամակը, Ս. Էջմիածնից եկեղեցական գումարների գործի մասին գրած նամակը և յիշատակարան-տետրակը, որոնք մասամբ նոյնպէս մեր յօդուածին նիւթ են մատակարարել: Հնորհակալութիւն եկեղեցական հոգաբարձութեան նախագահ Կ. Դաւիթ Խօջայեանին, որ թարգմանել տուեց անգլիերէն հաշուեգրերից մէկը և երկու բողոքագրերը և գորանով միջոց տուեց մեզ ծանօթանալու նոցա բովանդակութեան և հարկաւոր տեղեկութիւնները քաղելու նոցանից:

Յիշատակարան-տետրակը, որ հանգուցեալը գրել է բանտում և որ, ըստ երեւութին, շատ հետաքրքրական պիտի լինէր, չարգարագրեց մեր յոյսերը. դորա մէջ համարեալ թէ ոչինչ չ'կայ, բացի սորան-նորան նամակներ գրելու և ստանալու ամսաթուերից ու հանգամանքից:

սեփական աշխատանքով հոգան իւրեանց պէտքերը։ Նոյն ժամանակները գնաց Հնդկաստան և մի Տէր-Ստեփաննոս Յարութիւնեան ազգանունով քահանայ, որ անձամբ տեսնուի Կալկաթացի հարուստների հետ, համոզէ նոցա բարերար հանդիսանալու և ժողովարարութիւն անէ գաղթականների համար։

Թէ ո՞վ է եղել այդ Տէր-Ստեփաննոսը, որտեղի քահանայ է եղել և ո՞վ է ուղարկել նորան Հնդկաստան ժողովարարութիւն անելու յանձնարարականով,— այդ մինչև ցայսօր դեռ մեզ ոճով յայտնի չէ։ Մենք միայն գիտենք, որ նա եղել է Պօլսեցի, երկար ժամանակ մնացել է Կալկաթայում և վերադառնալով Պօլիս վախճանել է այնտեղ իւր ժառանգների մօտ։ Հաւանական է կարծել, որ նա քահանայ է ձեռնադրուած եղել դեռ Ղրիմում, գաղթականների հետ եկել է Նախիջևան և Յովսէփ Արղութեանի հաւանութեամբ ու յանձնարարութեամբ գնացել է Հնդկաստան գրուած նամակներին ոյժ տալու և նուիրատուութեան գործը յաջողեցնելու։

Արղութեանի նամակները, գիմումները և, նամանաւանդ, Տէր-Ստեփաննոսի յորդորներն ու քարոզները, ինչպէս յայտնի է, անհետեւանք չմնացին։ Հնդկաստանի Հայերը, մասնաւորապէս Կալկաթացիք, երկու տեսակ օգնութիւն մատուցին գաղթականներին. նոքա մէկ իւրեանց մէջ հաւաքեցին, իւրեանց խանութներէց, մեծ քանակութեամբ տեսակ-տեսակ կտորեղէն և «Հնդու ապրանք» անունով ուղարկեցին գաղթականներին նոցա մերկութիւնը ծածկելու նպատակով, մէկ էլ կտակներ արին Նախիջևանում արդէն եղած և լինելիք «բարեկարգութիւններին» — դպրոցների, հիւանդանոցի, աղքատանոցի, որբանոցի և տպարանի, մտածելով այդ միջոցով ապագայում ևս բարւոքելու նոցա նիւթական և բարոյական կացութիւնը։

Հինգ հարուստ մարդ հետգհետէ կտակներ են աւելում Նախիջևանցւոց համար — Յօհանջան Գէրաքեանը, Մասեհ Բաբաջանը, Եղիա Յակոբեանը, Սարգիս Ծառուր Աղաւելեանը և տիկին Կատարինէ Խօջամալեանը։

Յօհանջան Կիրակոսեան Գէրաքեան աղայի և նո-

րա արած կտակի մասին մենք շատ չնչին տեղեկութիւն ունենք. մենք միայն Նախիջևանի Ս. Լուսաւորիչ եկեղեցու գաւթի պատերի մէջ հազցրած մարմարեղէնեայ քարերի արձանագրութիւններից գիտենք, որ նա եղել է բնիկ ջուղայեցի և 1790 թուին մի որոշ գումար է յատկացրել Նախիջևանում «Լուսաւորչեան» անունով մի դպրոց հաստատելու: Բայց թէ արդեօք այդ գումարի քանակութիւնն որքան է եղել, նա ամբողջութեամբ տեղ է հասել, թէ ոչ, հաստատուել է դպրոցը և, եթէ հաստատուել է, որքան ժամանակ է գոյութիւն ունեցել և ինչո՞ւ է փակուել, կամ փակուելուց յետոյ, փողն ինչի վերայ է ծախսուել, — այդ բոլորի մասին Նախիջևանի պատմութիւնը խորին լռութիւն է պահում: Լռում են այդ մասին և կաթողիկոսական դիւանն ու Ս. Էջմիածնի սիւնհոգոսի թղթերը, այնպէս որ երբ 1858 թուին Տաքանըղզի քաղաքապետը, որի իշխանութեան այն ժամանակներն ենթարկուում էր և Նախիջևանը, տեղեկութիւն է խնդրել Լուսաւորչի վերոյիշեալ արձանագրութիւնների մէջ յիշուած Յօհաննան աղայի կտակի մասին, սիւնհոգոսն ոչ մի տեղեկութիւն չի կարողացել հաղորդել նորան, որովհետև իւր ձեռքին եղած թղթերում ոչ մի ծանօթութիւն չի գտել այդ մասին:

Կեսարացի մահտեսի Յակովբի որդի Նըիա Յակոբեանը ծնուած է եղել Հալեբում. նա առաջ բնակելիս է եղել ծաւա կղզու գլխաւոր քաղաք Բատտաւիայում և այնտեղ էլ հէնց ձեռք է բերած լինում բաւականին խոշոր կարողութիւն: 1799 թուի մայիսի 9 ին նա գրւում է մի կտակ, որով թողնում է Նախիջևանի տպարանին 5000 սքայ ռուփի, որ անում է 12 հազար ֆրանկ, կամ 3,125 ռուբլի արծաթ, որովհետև ամեն մի սքայ ռուփին հաւասար է  $2\frac{1}{3}$  ֆրանկի, կամ ռուսաց փողով  $62\frac{1}{2}$  կոպէկի: Կտակն անելուց ու վաւերացնելուց յետոյ, նա կարգում է իրան կտակաւատար Գասպար Վարդանեանց անունով մէկին և ինքըն առնելով իւր բոլոր ստացուածքը, չուում, գնում է, որոշակի յայտնի չէ, Մադրաս թէ Կալկաթա:

Սարգիս Ծատուր Աղաւելեանը 1808 թուին արել

է մի կտակ, որով թողել է Նախիջևանի դպրոցին ու  
 տպարանին և Գրիգորուպօլ քաղաքին 80 հազար հուն,  
 որ ուսաց փողով անում է համարեա 200 հազար  
 ուսուցիչ։ Կտակն անելուց յետոյ, նա ապրում է այլ ևս  
 չորս տարի և մեռնում է, թողնելով իրան կտակակա-  
 տար երկու անգլիացի և մի հայ Կիրակոս Յարուժիւ-  
 նեան անունով։ Եռետով դորանից յետոյ անգլիացի կը-  
 տակակատարներն էլ մեռնում են, և բոլոր կտակուած  
 գումարը մնում է Կիրակոս Յարուժիւնեանի ձեռքին.  
 որ մի բարեխիղճ մարդ լինելով, ամենայն սրբութեամբ  
 պահպանում է իրան յանձնուած գումարը, աշխատելով  
 քանցներ նորան, որքան հնարաւոր էր։ 1814 ին վախ-  
 ճանում է և այդ Կիրակոսը և գումարը թողնում է  
 իւր որդի Յարուժիւն Կիրակոսեանին, պատուիրելով  
 պահել ու աճեցնել, ըստ խղճի մտաց, մինչև որ կը-  
 տակատէրբը յայտնուեն և ստանան իւրեանց պատկա-  
 նելիքը։

Տիկին Կատարինէ Խօջամալեանն եղել է Կալկա-  
 թացի. նա 1796 թուի փետրուարին յայտնել է իւր  
 վերջին կամքը մի կտակով, որի զօրութեամբ իւր ամ-  
 բողջ կայքը նա բաժանել է 10 հաւասար մասի։ Մի  
 մասը նա թողել է իւր եղբորն Էլիազ Մինասեանին  
 իբրև ժառանգութիւն, երկրորդ մասը Յարուժիւն,  
 Յոհաննան և Պետրոս Էլիազներին, որ բաժանեն մի-  
 մեանց մէջ, երրորդ մասը քրոջը Դոստահան խանու-  
 մին իբրև ժառանգութիւն, չորրորդ մասը Ս. Էջմիած-  
 նին և Գանձասարի վանքին, հինգերորդը Ս. Յակով-  
 բայ վանքին։ Երուսաղէմում և Վանի հողի վանքին  
 կամ Ս. Կարապետին, վեցերորդը Նախիջևանի բարե-  
 գործական հաստատութիւններին, եօթներորդը Ս. Խաչ  
 վանքին Բաֆֆում, որ իւր պապի հայրենիքն էր, ու-  
 թերորդը նոր միայն հիմնարկուած Գրիգորուպօլ քա-  
 ղաքի բարեգործական հաստատութիւններին, իններոր-  
 դը՝ Նոր-Ջուղայի եկեղեցիներին և Սմենափրկիչ վան-  
 քին և, վերջապէս, տասերորդ մասի մի կէսը Տաթևու  
 վանքին, միւսը Կալկաթայի հայ ազգի աղքատներին։  
 1803 թուին տիկինը վախճանել է Բուսորում, թողնե-  
 լով կտակակատար իւր եղբորն աղա Էլիազ Մինասին,

որ և հաստատել ու վաւերացնել է տուել կտակն օրինասահման կարգով: Այդ էլիազ Մինասն իւր կենդանութեան ժամանակ պահպանելով ու աճեցնելով կտակուած գումարը, մեռել է, թողնելով կտակակտար իւր որդուն Յօհաննան Ելիազին, որ վախճանել է 1860 թուին, կտակուած գումարը թողնելով իւր այլի Վառվառէ Ելիազին և պատուիրելով՝ պահպանել ու աճեցնել գումարն այնպէս, ինչպէս ինքն ու իւր հայրն արել էին, և յանձնել կտակափէրերին, երբ նոքա յայտնուեն: Վեցերորդ մասը—Նոր-Նախիջևանի բարեգործական հաստատութիւններին կտակածը, ի սկզբանէ եղել է 2,342 սքայ ռուբլի, որ անում է 5,845 Ֆրանկ, կամ 1,461 ռուբլի արծաթ:

Մասեհ Բաբաջանը կամ Բաբաջանեանը, որ այլ ևս հասարակ անունով կոչուել է Աբգալմասեհ Մարտիրոս, եղել է Համադանցի և յաջող առևտրական գործերով մեծ հարստութիւն է ձեռք բերած եղել Կալկաթայում: Նա 1794 թուի Մայիսի 30-ին վերոյիշեալ Տէր-Ստեփաննոս քահանայի յորդորների ազդեցութեան ներքոյ արել, իւր ստորագրութեամբ հաստատել և երեք վկայի՝ Տէր-Ստեփաննոս քահանայի, Մարգար Յովհաննէսեան Բաբումեանցի և Յովհաննան Պետրոսի ստորագրութիւններով վաւերացրել է մի կտակ, որով իւր բոլոր շարժական ու անշարժ կայքը բաժանել է 16 մասի, որի կէսը, այսինքն 8 մասը նա թողել է, կամ, ինչպէս ինքն է ասում, «վախմ է արել, Ազոֆ գաւառի Նոր-Նախիջևանու քաղաքի Հալոց բարեկարգութեան», այն է երկու մասը գւյրոցներին, երկուսն աղքատանոցին, երկուսը հիւանդանոցին և երկուսն որբանոցին: Մնացեալ 8 մասից վեցը նա կտակել է Կալկաթայի Կորտ. աֆ. Ռիկուէլտի կամ Փոքր Ղլի բանտարկեալների օգտին, իսկ երկու մասը Հայաստանից Կալկաթա եկող օտարական Հայերին:

Բարեբարի բոլոր ստացուածքն այդ ժամանակները բաղկացած է եղել շարժական կայքից, այսինքն տան կահ-կարասիքից, արծաթեղէնից և սորա-նորա վերայ պարտք եղած փողերից, որոնց մուրհակները պահուում են եղել հանգուցեալի տան մէջ եղած երկաթեայ պա-

Հարանում, և անշարժ կալուածքից, այսինքն երեք տանից, որոնցից ամենամեծը և գնոջը գտնուում է եղել Հայոց Ս. Նազարէթ եկեղեցուն կից և մի երեսով գուրս է գալիս եղել Ձինի բազար կոչուած նշանաւոր առւտրական և բանուկ փողոցը, իսկ միւս երկուսից առաջինը գտնուում է եղել Լատինացւոց եկեղեցու, Հայազգի Գաբրիէլ Յովհաննէսի և ժամագործ Մարգարի որդի Նիկողոսի տների մօտ, երկրորդը-Հայազգի Սաքսանյաւեան Ստեփաննոս Յարութիւնի, Դաւիթ Ստեփանի և Հեթանոս Ամիրզանգի տներին կից: Մեծ տունը, որ նա շինել էր 1793 թուին, ծախսելով նորա վերայ 45 հազար սքալ ուլփի, բարձրաշէն է եղել և ստորին յարկում փողոցի երկարութեամբ պարունակում է եղել իւր մէջ մի շարք խանութներ կամ կրպակներ: Միւս երկու տունը համեմատաբար շատ փոքր են եղել և հնացած. նոցանից մէկի մէջ ինքն է ապրում եղել իւր աղաթին Աննայի և իւր մօր աղաթին Սուգայի հետ, որոնք ընդունած են եղել քրիստոնէութիւն հէնց իւր Բաբաջանի տանը:

Կտակակատար և լիազօր ներկայացուցիչ—«վէրիլ» Նախիջևանի կողմից նա առաջին նուագ կարգել է Ներսէս Յովհաննէսին և Դիոնեսիոս Հայրապետեանին, իսկ բանտի կողմից—Կորտ-աֆ-Ռիկուէշտի առաջին գատաւորին, տալով իրաւունք Նախիջևանի արքեպիսկոպոսին և չբարեկարգութիւնների կառավարիչներին, իւր մահից յետոյ, կարգելու կառավարիչ, որին որ ինքեանք կցանկանան, որին որ յարմար կգտնեն, կամ կհամարեն: Այս վէրիլներն, իւր մահից ու թաղումից յետոյ. պիտո՞ հաւաքուէին իւր տունը, բանալին երկաթեայ պահարանը, ի յայտ ածէին բոլոր փողերը, եկամուտները և ապա ամեն Յունուար ամսի բոլոր եկամուտը բաժանէին 16 մասի և ուղարկէին ու տալին ըստ պատկանելոյն, նախապէս հանելով հաւաքուած գումարի Խմբողութեան վերալից անշարժ կալուածներից արքունիքին հասանելիք հարկը և տների վերանորոգման համար հարկաւոր գումարը ևս և իւրեանց աշխատանքի համար հարկւրին հինգ տոկոս վարձատրութիւն առնելով:

Հետևեալ տարին, այսինքն 1795 թուի Ապրիլի 1-ին, Բաբաջանի նոյն Տէր-Ստեփաննոսի յորդորանքով արել է մի նոր կտակ, կամ, լաւ է ասել, լաւելուած, որով իւր առաջին կտակը չփոփոխելով և դրամի կարգադրութեան եղանակը նորից հաստատելով ու պահպանելով, մի յօդուածի փոփոխութիւն է միայն մտցրել նորա մէջ. նա հանել է 16 մասի միջից իւր մեծ տունը, որ նա արժեցրել է 50 հազար ռուբլի, և նորա ամբողջ եկամուտը, որ նա հաշուել է 40 հազար ռուբլի տարին, կտակել է Նոր-Նախիջևանի Ս. Լուսաւորիչ եկեղեցու հովանաւորութեան տակ հաստատուած Ս. Սահակի և Մեսրոպի դպրոցներին, որոնց պահպանութեան համար հարկաւոր է եղել տարին 40 հազար ռուբլի: Այդ կտակն էլ նա վաւերացրել է իւր և երկու վկայի— Էլիազ Մինասեանի և Մուրադ Էլիազեանի ստորագրութիւններով, թէև օրէնքն այդ ժամանակները պահանջում է եղել երեք վկայի ստորագրութիւն:

Իւր կտակները գրելուց յետոյ, Բաբաջանն այլ ևս ապրել է 2—3 տարի և վախճանել ու թաղուել է Կալկաթայում: Բայց թէ որտեղ է ամփոփուել նորա մարմինը՝ Անգլիացւոց գերեզմանոցում, թէ Հայոց եկեղեցու բակում, — այդ մենք որոշակի չգիտենք: Հանգուցեալը կտակած է եղել, որ իրան թաղեն Ս. Նազարէթի բակում իւր մօր մօտ և այդ նպատակով ընծայած է եղել եկեղեցուն գերեզմանատեղի փոխարէն մի որոշեալ տարածութիւն իւր ունեցած գետնից, որովհետև, ինչպէս ասացինք, նորա մեծ տունը գտնուում է եղել եկեղեցու բակին կից: Բայց ի նկատի առնելով, որ ինքն ունի թշնամիներ ու նախանձողներ, որոնք կարող էին խափանարար լինել նորա այդ ցանկութեան, աւելացրել է իւր կտակում, թէ եթէ չկամենան իրան իւր ցանկացած տեղում, ախինքն եկեղեցու բակում, ձրի թաղել, թող տանեն Անգլիացւոց գերեզմանատունը, իսկ իւր ընծայած գետինը յետ պահանջին եկեղեցուց դատարանով: Խեղճը մինչև անգամ երկիւղ է կրել, որ իւր նախանձոտ հակառակորդները կարող էին վնաս հասցնել և իւր կալուածքին, կարող էին քանդել և կտակը, ուստի և ամեն տեսակ աշխատել է ապահովել

նոցա զանազան պատահարներէց: Նա իսկոյնեւթ իւր կտակն օրինաւորօրէն եղանակով հաստատել է տուել Բենգալիոյ բարձրագոյն դատարանի—Սուպրեմ-Կորտի, հոգեւոր բաժնում և ճշտութեամբ որոշել է իւր տան ու տեղի սահմաններն եկեղեցու կողմից, որովհետեւ հէնց գլխաւորապէս այդ կողմից է անապահով համարել իւր կալուածքը:

Թէ որքան հաստատուն համոզմունքով ու գիտակցաբար է արել նա իւր կտակը և, նամանաւանդ, յաւելուածը, —այդ երևում է այն հանգամանքից, որ նա իւր այդ երկրորդ կտակը գրելուց ու վաւերացնելուց յետոյ, իրան այլ ևս տէր չի համարել մեծ տան, այլ միայն գործակալ, որ պէտք է բոլոր եկամուտը հաւաքէր և շահեցնէր Նախիջևանի դպրոցների համար և ամեն բանում հաշիւ տար Տէր-Ստեփաննոս քահանային, որին նա կարգել էր առաջին հաւատարմատար Նախիջևանի բարեկարգութիւնների: Նա մինչև անգամ ծախածի պէս էր արել իւր կալուածքը լիշեալ Տէր-Ստեփաննոսին Նախիջևանի դպրոցների համար և կատարել էր Հնդկաստանում այդ ժամանակներն ընդունուած կալուածք վաճառելու ձեւականութիւնը, այսինքն ստացել էր Տէր-Ստեփաննոսից մի հնդկական ոսկի-ազուլմօհր իբրեւ գրաւական, պարտականութիւն ստանձնելով իւր կտակը չկատարելու կամ փոխելու դէպքում հատուցանելու Նախիջևանի հաւատարմատարին 80 հազար սքալ ռուփի իբրեւ տուգանք կամ գին իւր տան:

### Գլուխ Բ.

Հնդկաստանում Նախիջևանի բարեկարգութիւնների օգտին կատարուած կտակների մասին իւր ժամանակին անկասկած տեղեկութիւն է տրուում Նախիջևանցուց և պէտք է կարծել, որ կտակներից մի մի օրինակ էլ ուղարկուած է լինում Նախիջևանի կառավարութեան և Ս. Էջմիածին: Մասեհի կտակից, օրինակի համար, պատրաստուած է լինում չորս օրինակ, որոնցից մէկը—իսկականը կամ բնագիրը, պահպանութեան է տրուում

Սուլայրեմ Կորտի Հոգեւոր բաժինը, միւսը մնում է իւր ձեռքին, մնացեալ երկուսից էլ մէկն ուղարկուում է Նախիջևան, միւսը, հաւանականաբար, Ս. Էջմիածին: Բայց Նախիջևանցիք այնքան անփութ են գտնուում, որ ոչ թէ միայն Հոգ չեն տանում իւր ժամանակին իւրեանց իրաւունքները բանեցնելու, լիազօրներ նշանակելու և իրանց պատկանելի գումարները բարերարների կտակակատարներից ստանալու, այլ և մոռացութեան են տալիս նոյն իսկ կտակների գոյութիւնը և կորցնում, անհետացնում են և իւրեանց ձեռքին գրտնուած կտակների գոյութիւնը հաստատող վաւերականները, այնպէս որ երբ 1828 թուին Ներսէս Աշտարակեցին այցելում է Նախիջևանը, կտակների մասին նա ոչ մի վաւերական չի գտնում և ստիպուած է լինում իւր ձեռքին եղած կտակներին վերաբերեալ թղթերից մի մի օրինակ ընդօրինակել և թողնել Հայկական Մագիստրատի դիւանում: Այդ ընդօրինակութիւններն արքեպիսկոպոսը վաւերացնում է հետեւեալ մակագրութեամբ՝ «Համեմատ հեղինակին օրինակեցաւ յամի 1828, օգոստոսի 28, ի Նախիջևան քաղաքի, որոյ իսկն եղեալ ընդ իս՝ մնաց դարձեալ առ իս. ոյր վասն յաղաքս հարազատութեան այսմ օրինակի ստորագրեմ Արքեպիսկոպոս Հայոց Վրաստանու Ներսէս»:

Նախիջևանցւոց անհոգութիւնը զարմացնում է մինչև անգամ կողմնակի մարդկանց-Վալկաթացւոց, Կոստանդնուպոլսեցւոց և Զմիւռնացւոց, որոնք տեղեակ էին կտակների գոյութեան, գլխաւորապէս Մասեհի և Կատարինէ Խօջամալեանի կտակներին: Դոքա կարծելով, որ Նախիջևանցիք անհոգ ու անփութ են, որովհետև իւրեանց ձեռքին հաւաստի տեղեկութիւններ չունեն կտակների մասին, հետզհետէ գրում, տեղեկութիւն են հաղորդում-ոմանք ուղղակի Նախիջևան, ոմանք էլ Ս. Էջմիածին, յորդորելով շտապելու գործ դնելու իւրեանց իրաւունքները և ցոյց տալով ստանալու եղանակն ու ճանապարհը:

Առաջին յորդորական նամակը կամ թուղթը ըստացուում է Պօլսից 1818 թուին դորա հեղինակի անունը թէև յայտնի չէ, բայց թղթի բովանդակութիւ-

նից երևում է, որ նա եղել մի յայտնի մարդ, որին ճանաչել են և Նախիջևանցիք և որ մօտ բարեկամ ու ծանօթ է եղել Պօլսի ուռւսաց լիազօր դեսպան Թամա-րօվի խորհրդական յայտնի Գէորգ աղա Աղայեկեանի հետ, որի խորհրդով և գրել է նա այդ թուղթը։ Դա, այդ թուղթը, հետաքրքրական է երկու կողմից. մէկ ուր դորա մէջ գտնուում են մի քանի տեղեկութիւններ վերոյիշեալ Տէր-Ստեփաննոս Յարութիւնեանի և Մասե-հի կտակած կալուածքի վիճակի մասին, մէկ էլ որ դո-րա մէջ առաջին անգամ խօսք ու զրոյց է լինում կտակները ստանալու եղանակի ու ձևի մասին։ Նա-մակագիրը, ինչպէս երևում է, ունեցել է, նախ, ա-ռևտրական գործեր և յաճախակի յարաբերութիւն Կալ-կաթացւոց հետ, երկրորդ, բազմաթիւ բարեկամներ Հնդկաստանի Հայերի մէջ, որոնց միջնորդութեամբ և յոյս է ունեցել ստանալու Նախիջևանին հասանելիք բա-ժինը Մասեհի կտակից և հասցնելու անկորուստ Նախի-ջևանցւոց ձեռքը։

Տէր-Ստեփաննոսի մասին հաղորդուում է, որ նա Կալկաթայից վերադարձել է Պօլիս և մտադիր է եղել գնալու Նախիջևան և օրինասահման կարգով մի «վէ-քիլագիր» կազմելու նամակագրի անունով Նախիջևան-ցւոց կողմից և ուղարկելու Պօլիս, որ նա, այսինքն նամակագիրը, տարեցտարի ստանալ կալուածքի ար-գիւնքը և ուղարկէ Նախիջևան, բայց չի ժամանել իւր այդ մտադրութիւնն իրագործելու, որովհետև վախճա-նել է իւր ժառանգների մօտ և գործը մնացել է երե-սի վերայ։ Հանգուցեալ քահանան բերած է եղել իւր հետ և Մասեհի կտակագրից մի օրինակ, որ նամակա-գիրն իւր թղթի հետ ուղարկում է Նախիջևան, կար-ծելով, որ Նախիջևանցիք կամ չունեն իւրեանց ձեռ-քին կտակի հաւաստի օրինակը, կամ, գուցէ, իսպառ տեղեկութիւն չունեն կտակի գոյութեան մասին։

Նախիջևանի կողմից Մասեհի կարգած առաջին վէքիլները՝ Ներսէս Յովհաննեսը և Դիոնեսիոս Հայրա-պետեանը, ինչպէս իմացել է նամակագիրը Կալկաթացի քարեկամներից, այդ ժամանակները վախճանած են եղել և Նախիջևանի կողմից նոր վէքիլներ կարգելու

Հոգացողութիւն չլինելու պատճառով, կալուածքի կառավարութեան իրաւունքն ամբողջապէս անցել է «ինքնիշխման մայրստրի» ձեռքը, որ տարէցտարի հաւաքում է տների եկամուտը: Թէև Ս. Էջմիածնի միաբան Վրթանէս եպիսկոպոսը, որ հէնց այդ ժամանակները նուիրակութեան գործով շրջապայելիս է եղել Հնդկաստանի Հայերի մէջ, կամեցել է տիրել կտակին, բայց չի յաջողել, որովհետև չի կարողացել ապացոյց տալ, թէ Նախիջևանի դպրոցներն ու բարեգործական հաստատութիւնները, որոնց պահպանութեան համար եղած էր կտակը, գոյութիւն ունին:

Կտակուած գումարն էլ ստանալու համար հետեւեալ ճանապարհն է ցոյց տրուում նամակում. Նախիջևանցիք պէտք է, հիմք բռնելով կտակը, իրաւագիտական ոճով մի վէքիլագիր կազմէին ֆրանսերէն և հայերէն և վկայելով նորա մէջ, թէ դորանով նոքա լիազօրութիւն են տալիս նամակագրին կամ Աղայեկեանին 1794 — 95 թուականներից մինչև 1818-ը հաւաքուած գումարը, որտեղ և ում ձեռքին և լինի նա, ստանալու և հասցնելու ըստ սլտականելոյն, և վաւերացնելով այդ վէքիլագիրը բարեգործական հաստատութիւնների կառավարիչների ստորագրութեամբ, Մաքիստրատի կնքով և դպրոցների տեսչութեան վկայագրով, ուղարկէին Պոլիս: Նամակագիրը մտադիր է եղել իւր կողմից այդ գործը յանձնելու իւր Գալկաթացի բարեկամներից մէկին, որ նա ստանալ բոլոր գումարը տեղական փողով-սքայ ոռւփիով և ուղարկէ իրան Պոլիս, իսկ ինքը վերածելով սքայ ոռւփին Օսմանցւոց ղուրուշի, կհատուցանէ Նախիջևանցւոց երբ և որտեղ նոքա կըրցանկանան:

Թէ ինչ հետեւանք է ունենում Պոլսեցու այդ թուղթը, չենք կարող ասել. բայց ենթադրում ենք, որ Նախիջևանցիք, որոնք 1794 թուից մինչև 1818-ը ոչ մի ձայն չէին հանել, ոչ մի ձգտումն չէին ցոյց տուել իրանց իրաւունքները պաշտպանելու, այդ ժամանակն էլ անփոյթ են գտնուել, ուշադրութիւն չեն դարձրել բարեացակամ ու ազգային սեփականութեան շահերին նախանշախնդիր մարդու յորդորանքի և խորհուրդ-

ների վերայ: Մեր ենթադրութիւնը ճշմարտութեան չափ հաւանականութիւն է ստանում, եթէ ի նկատի առնենք այն հանգամանքը, որ հետեւեալ 1819 թուին նամակագիրը վերստին կրկնել է իւր նոյն բովանդակութեամբ թուղթը: Դժուար չէ, ուրեմն, եզրակացնել, որ անյայտ պարոնն իւր գրութեան պատասխանը չըստանալով, ստիպուած է եղել նորից կրկնելու նոյնը:

Այս նամակագրութեան վերայ անցնում է այլ ևս 28 տարի, և Նախիջևանցիք այդ բոլոր ժամանակամիջոցը լուռ են մնում, գոնէ, ոչ մի թուղթ, ոչ մի գրաւոր յիշատակարան, մինչև իսկ ոչ մի բերանացի աւանդութիւն չի պահպանուել, որ ցոյց տար, թէ Նախիջևանցիք այս կամ այն ճանապարհով, այս կամ եղանակով, եթէ չասենք աշխատել են ազգային իրաւունքները պաշտպանել, գոնէ, հակումն են ցոյց տուել, ձգտումն են ունեցել մի ըստ անելու: 1846 թուին, վերջապէս յայտնի Մեսրոպ Թաղիադեանն իւր Ազգասէր լրագրում հրատարակում է Մասեհի կտակը մի փոքրիկ լառաջանով, որի մէջ կտակի էական կէտերը, այսինքն կրտակողի անունը, կտակուած կալուածքը և կտակի նըպատակը յիշատակելուց յետոյ, աւելացնում է, թէ արդէն անշարժ կալուածքի եկամտից հաւաքուել է մի 100 հազար կումպանուռուփի չափ գումար, որ գրտնուում է «տէրութեան յիշատակաց դպրի» ձեռքին և որ այդ մասին թէև քանիցս գրուել է Նախիջևանի կառավարութեան, բայց ոչ մի արդիւնք չի եղել: Ազգասէրին՝ յաջորդ թուերից մէկում նոյն Թաղիադեանցը մի յօդուած է տպում, որի մէջ զանազան խորհրդակցութիւններ է անում արդէն հրատարակուած կտակի մասին: Նա, նախ, խնդրում է իւր պաշտօնակից Պօլսի, Զմիւռնայի և Թիֆլիզի խմբագիրներից, որ արտասպեն կտակն իւրեանց լրագրներում և իւրեանց սեփական յօդուածներով էլ յորդորեն Նախիջևանցւոց աշխատանք գործ դնելու, հոգացողութիւն անելու կտակուած գումարը և կալուածքի տիրապետութեան իրաւունքը ձեռք բերելու համար. երկրորդ, նա տպում է բոլոր Կալկաթացի Հայերի անունները, որ Նախիջևանցիք իմանան, թէ ում կարելի է յանձնել ստանալու լիազօրութիւնը:

Գալիաթայի Հայ Թերթի խմբագրի կարծիքով, կտակի իրաւունքը ձեռք բերելու համար, Նախիջևանցիք բաւական էր որ կազմէին մի «կարողական գիր» և ուղարկէին Գալիաթացի Հայերից մէկի վերայ, լիազօր իրաւունք տալով նորան, համեմատ կտակի իմաստին, պահանջելու «իշատակաց դպրից» բոլորը՝ եւ մինչև այդ ժամանակ հաւաքուած գումարը տան եկամտից, եւ տպագայում ևս նորանից ստանալիքը: Միայն որ այդ կարողագիրը պէտք է վաւերացրած լինէր Նախիջևանի կամ Ռուսաստանի մի որևէցէ տեղի կայսերական դատարանի կնքով, Ռուսաց արտաքին գործոց նախարարի ու Պարսկաստանի կամ Եգիպտոսի Ռուսաց դեսպանի ձեռքով և մի որևէ անգլիական դեսպանի վկայութեամբ:

Թէև «Ազգասէրի» հրաւերքն իսպառ անհետևանք չի մնում, և Զմիւռնայի «Արշալոյս Արալատեանը» արտատրւում է կտակը և իւր կողմից էլ յորդորներ է կարգում Նախիջևանցւոց, հրաւիրելով նոցա ուշադրութիւնը կտակի և նորա ստանալու ցոյց տրուած եղանակի վերայ, բայց Նախիջևանցիք դարձեալ կենդանութիւն չեն ցոյց տալիս, դարձեալ անփոյթ ու անուշադիր են գտնուում, թէև նոքա չէին կարող լսած ու կարդացած չլինել վերոյիշեալ Թերթերի գրածները, որոնց մէջ շեշտուած է և այն հանգամանքը, որ եթէ 75 տարուայ ընթացքում ձեռք չբերուէր կտակի իրաւունքը, կտակուած անշարժ կալուածքը և նորանից հաւաքուած ամբողջ եկամուտը պիտի սեփականութիւն դառնար Տէր-Ստեփաննոսի ժառանգներին:

Անցնում է այլ ևս 12 տարի, և 1858 թուին Նախիջևանի և Բեսսարաբիոյ Թեմին առաջնորդութեան տեղապահ է կարգուում լայտնի Գաբրիէլ վարդապետ Այվազեանը, որի այդ պաշտօնին կոչուելը, առանց կաթողիկոսի հաճութեան, այնքան խռովութիւնների պատճառ է լինում Նախիջևանում և ընդհանրապէս այնքան խօսք ու գրոյցի առարկայ է լինում բոլոր Հայերի մէջ: Տագանրոգի քաղաքապետը, որ, ինչպէս ասացինք, այցելելով Նախիջևանը և վերահասու լինելով Ս. Լուսաւորչի արձանագրութիւնների իմաստին, դորանից մի

փոքր առաջ արդէն դիմել էր Ս. Եջմիածնի Սիւնհոդոսին և տեղեկութիւն էր խնդրել Նախիջևանի օգտին եղած Յօհանջան աղայի և միւսաների կտակների մասին, այդ ժամանակն էլ առաջինն է լինում, որ նորընտիր տեղապահի և Հայկական Մագիստրատի ուշադրութիւնը հրաւիրում է կտակների վերայ: Քաղաքապետի արած քայլը խթան ընդոստուցիչ է լինում Նախիջևանցւոց. նոքա տեսնելով, որ մինչև անգամ մարմնական իշխանութիւնն էլ ուշադրութիւն է դարձնում կտակների վերայ և ձգտումն է ցոյց տալիս խառնուելու գործի մէջ, սթափուում են խոր քնից և, 63—4 տարի անցնելուց յետոյ, առաջին անգամ, այն էլ քաղաքապետի հարկեցուցիչ լորդորմամբ, իւրեանց քաղաքագլուխ Սիմաւոն ալա Ալաջալեանի բերանով պաշտօնապէս դիմում են առաջնորդի տեղապահին և խնդրում են հոգ տանելու Հնդկաստանում Նախիջևանի բարեգործական հաստատութիւնների համար եղած կտակների իրաւունքը ձեռք բերելու:

Մի փոքր աւելի հոգացողութիւն կտակների իրաւունքը ձեռք բերելու գործի վերաբերմամբ ցոյց է տալիս Ս. Եջմիածինը: Երջանկայիշատակ Յփրեմ կաթողիկոսն իւր Հաղբատ եղած ժամանակ օրհնութեան նամակներ է գրել Կալկաթայի Գէորգ Փանոս Բարաղամեանին և Ս. Նազարէթ եկեղեցու քահանայ Տէր-Յովսէփին, որոնց մէջ, ի միջի ալլոց, տեղեկութիւն խնդրել և Մասեհի կտակի մասին: 1825 թուին Բարաղամեանից ստացուած նամակի պատասխանից յայտնուել է, որ առաջին կտակակատարների մահից յետոյ, կալուածքն անցել է Սուպրում-կորտի «ռէջիստերի» իշխանութեան ներքոյ և որ մեծ տանից ստացւում է արդիւնք ամսական 115 ռուբլի, իսկ խանութներից-100 ռուբլի, որից հանելով հինգ առ հարիւրն իբրեւ վարձատրութիւն կտակակատարներին և նորոգութեան համար հարկաւոր գումարը և միւս անհրաժեշտ ծախսերը, մնացեալը հաւաքւում է և պահւում ռէջիստերի մօտ, որի անունն այդ ժամանակ եղել է Ստոր ջէմս Ուէիլհայդ-James War Haggai: Նոյն թուին ստացուել է Տէր-Յովսէփին գրած նամակի՝ պատասխանը, որի հետ և կտակին վերաբերեալ մի քանի պաշտօնական վաւերացութիւններ կտա-

կի հայերէն և անգլիերէն մի օրինակը, մի հայերէն և անգլիերէն տարեկան հաշուեգիր, հայերէն և անգլիերէն մի ընդհանուր հաշուեգիր սկզբից մինչև 25 թիւը և մեծ տան ու խանութների տարեկան եկամուտների հաշուեգիրը:

Ահա այս թղթերն են, որոնք յետոյ անցնում են Ներսէս Աշտարակեցու ձեռքը, որոնցից մի մի օրինակ նա ընդօրինակելով թողնում է Նախիջևանում և որոնց հիման վերայ նա սկսում է գրագրութիւն անել Կալկաթացուց հետո Թէ ինչ հետեանք է ունենում այդ գրագրութիւնը, մեզ յայտնի չէ, որովհետև այդ գրագրութիւնը մեր ձեռքը չի հասել: Մի բան միայն լաւ յայտնի է մեզ, — որ ոչ մի գրական հետեանք չի եղել այդ գրագրութիւնից և անխոնջ Ներսէսը, վերջի վերջոյ, ստիպուած է եղել թողնել այդ ճանապարհը և դիմել իւր բարեկամ իշխան Վորոնցովի օգնութեան: Անկասկած, Ներսէսը, որի կամքի զօրութիւնը և մի նպատակի հասնելու համար գործ դրած եռանդն ու ջանքը սահման չունէր, վերջ ի վերջոյ, կհասնէր իւր նպատակին և, ինչ հնարաւոր էր, կստանար Հնդկաստանից, եթէ միայն իշխանի սկսած պաշտօնական գրագրութիւնները տէրութեան գլխաւոր պաշտօնեաների արտաքին գործոց նախարարի և միւսների և անգլիական նախարար Լորդ Մէլլսբիւրնի հետ այնքան չերկարէր և մահը չվերահասնէր ծերացած հայրապետին:

Վերջին անգամ կտակների խնդիրը Ս. Էջմիածնում յարուցանելու առիթ է տալիս Տագանրոզի քաղաքապետի գրութիւնը, որի մասին մենք վերը լիջեցինք: Ս. Էջմիածնի Սիւնհոդոսը գտնելով հանգուցեալ կաթողիկոսի թղթերի մէջ Կովկասի նախկին փոխարքայ իշխան Վորոնցովի վերջին թուղթը, որով իշխանը հաղորդում էր կաթողիկոսին լորդ Մէլլսբիւրնի ենթադրութիւններն ու կարծիքը յարուցուած գործի մասին, ուղարկում է նորան Պարսկաստանի և Հնդկաստանի այդ ժամանակուայ առաջնորդ Թադէոս արքեպիսկոպոսին, յանձնելով նորան կտակների խնդրի հոգացողութիւնը, համաձայն անգլիական նախարարի ենթադրութեան: Ի պատասխան սիւնհոդոսի գրութեան, առաջնորդը հա-

ղորդում է, թէ Մասեհի կտակի ժամանակն արդէն անցած է, որովհետեւ Անգլիացւոց տէրութեան օրէնքով, եթէ մէկը 36 տարուայ ընթացքում չի ստացել կտակաւանդուած գումարը կամ կալուածքը, այնուհետեւ իսպառ զրկուում է ստանալու իրաւունքից, և կտակուածն ամբողջովին անցնում է տէրութեան ձեռքը: Պարելի է միայն այդ մասին դիմել Անգլիացւոց թագուհու ողորմածութեան և, այդ էլ, իհարկէ, կարող է անել միայն կաթողիկոսը, խնդրել կտակաւանդածն ոչ իբրեւ իրաւունք, այլ իբրեւ շնորհք: Իսկ ինչ որ վերաբերում է տիկին Պատարինէ Խօջամալեանի կտակին, — առաջնորդն այդ կարելի է համարում ստանալ, և այդ մասին արդէն ինքը գրել էլ էր Նախիջևանի և Բեսսարաբիոյ թեմի վիճակաւոր Գաբրիէլ վարդապետ Այվազեանին, որ նա անգլիական հիւպատոսի ձեռքով վկայուած մի կարողագիր ուղարկէ իրան: Սիւնհոյսն էլ Թադէոս արքեպիսկոպոսից ստացուած կտակին վերաբերեալ թղթերը Ս, Էջմիածնում կտակների մասին եղած թղթերից արած մի ընդարձակ քաղուածքի հետ միասին ուղարկում է Այվազեանին, հրամայելով փութով կատարել սրբազան Թադէոսի խնդիրը, որպէս զի օր առաջ ստացուի կտակուած ու այդքան ժամանակ անտէր մնացած գումարը, որով և վերջանում են Ս. Էջմիածնի կտակների վերաբերմամբ գործ դրած հոգացողութիւնն ու գործողութիւնները <sup>1)</sup>:

Այսպիսով կտակներ անելու ժամանակներից անցնում է ամբողջ 60 տարի, և Նախիջևանցիք ոչ մի միջոցի չեն ձեռնարկում իւրեանց բարեգործական հաստատութիւնների օգտին եղած գումարները ստանալու, իսկ Ս. Էջմիածնի գործ դրած միջոցներն այնքան թույլ ու անորոշ են լինում, որ վերջիվերջոյ, ոչ մի դրական հե-

<sup>1)</sup> Հրիտակների և նոցա իրաւունքը ձեռք բերելու համար եղած փորձերի մասին տես 1861 թուի «Մասեաց Աղաւնի»-ի Յունիսի, Յուլիսի և Օգոստոսի տետրակներում տպագրուած «Նախիջևանի համար Հնդկաստանի մէջ կտակով ձգուած փողերուն վրայ տեղեկութիւն» խորագրով Գաբրիէլ վարդապետ Այվազեանի յօդուածը:

տեանք չի ստացուում: Եղած բոլոր հոգացողութիւններն ու գործողութիւններն էլ սահմանափակուում են երկու կտակի ստանալու խնդրով. Մասեհ Բարսիլանի և Կատարինէ Խօջամալեանի, որոնցից առաջին և ամենանշանաւորի իրաւունքը, վերջիվերջոյ, կորած է համարուում, իսկ երկրորդի ստանալը հաւանական: Ինչ որ վերարերում է միւս կտակներին, — Թողնելով մի կողմ Գէրաքեան Յօհաննան աղայի կտակածը, որ, ինչպէս երևում է Ս. Լուսաւորչի արձանագրութիւններից, իւր ժամանակին ստացուած է լինում Նախիջևանում, նոքա, այսինքն Եղիա Յակոբեանինը և Սարգիս Ծատուր Աղաւելեանինը, իսպառ չեն յիշուում, գոցտ կտակաւանդածը վերջնականապէս կորած է համարուում:

ԵՐՈՒՍՆԴ ԵՍՎԱԶԻՋ

(Կը շարունակուի)